

մէջ մնաց : Ունի դարձեալ ուրիշ քանի մը պղտի գրուածքներ ալ՝ որոնք իր հանձարոյն վերջին երկասիրութիւնքն եղան :

Կը շարունակուի :

### Ծուետք կամ բազարորոշիւն Ծուետի և Նորվեկիոյ :

Հիւսիսային կիսագնտիս սառուցեալ բեռացը տակ կ'իյնայ Ծ ուետի թագաւորութիւնը ընդ մէջ Հիւսիսային և Պալթիկ ծովուց : Ծ յս ընդարձակ թերակղզիս հին անուամբ կը կոչուի նաև թագաւորութի Ականտինաւեան և կամ Միացեալ պետութիւն Ծ ուետի և Արովեկիոյ , և աշխարհիս վրայ ամենէն աւելի հիւսիսային տէրութին է . կը ձգուի  $70^{\circ} 11' 40''$  հիւս . լայն . մինչև  $55^{\circ} 20'$  հիւս . լայն . որ է ըսել Արովեկիոյ հիւսիսային կողմը բևեռացին շրջանակէն ալ խել մը անդին : Ականտինաւեան թերակղզիս՝ որուն ամբողջ արեւելեան մասը Ծ ուետին է , Առուսատանէն Գառլա և Գեմի գետերով միայն կը բաժնուի , որոնց առաջինը Առուցեալ ծով ու երկրորդը Պալթիկ ծով կը թափին :

Հաւանական կը կարծուի թէ ատենօք Շերմակ ծովն ( յնէկա և լատոկա լճերու հետ միացած ըլլայ և հետեւաբար Պալթիկ ծովուն հետ , որով և այս Ականտինաւեան թերակղզիս ալ մեծ կղզի մը եղած ըլլայ : Ինութիւնը այս թերակղզիիս աւելի ընդարձակ սահմաններ որոշած էր՝ քան ինչ որ է հիմա . բայց քաղաքական այլ և այլ գետեր ամփոփել տուած են իրեն սահմաններ : ( յրինակի համար , հիւսիսային Ծ ուետի սահմանն է հարաւէն Գառնէօ և Առնիօ գետերը՝ մինչև Քիլբիս-Ջառէս լիձը . իսկ հիւսիսէն Գառնա գետը որ Առուցեալ ծով կը թափի . Ամդ այս սահմանագլուխ կազմող գետերուն շուկութեամբը որչափ որ դէպ 'ի ներսէրը երթանք՝ կը տեսնենք

որ ընդարձակ գաւառներ Առուսներէն գրաւուած են , որով և Ծ ուետի իր օրինաւոր սահմաններէն խել մը ներս ամփոփուած է : Առուսք ասով գոհ չըլլալով այլ և այլ միջոցներ միշտ ջանացած են իրենց սահմանները աւելի ընդարձակել մինչև Հիւսիսային ծով՝ որպէս զի հոն նաւարան և նաւատորմիդ մը ունենան . սակայն 1854-56<sup>6</sup> պատերազմէն ետքը Արովեկիոյ գլխաւոր տէրութիւնները Ծ ուետի հետ միացած՝ գայնագրութեամբ ստիպեցին զի Առուսերը որ ետ կենան նոյն կողմերը տիրապետելու փորձեր ընելին :

Ծ ուետի և Արովեկիոյ ընդ հանուր տարածութիւնն է 36,600 քարսախ քառ . և ըստ երկայնութեան՝ Ֆալգերպոյէն մինչև Արովեկիոյ սարը որ՚ի Ֆինմարք 1025 մղոն է , և ըստ լայնութեան՝ Արկենէն մինչև Արգոքհոլմի արևելեան ծայրը 436 մղոն . իսկ առանձին առած՝ Ծ ուետի տարածութիւնն է 8,000 մղոն՝ աշխարհագրական , և Արովեկիոյ 306,405 քառ . հարիւրամէզր :

Ծ ուետի և Արովեկիոյ միացեալ թագաւորութիւնը Արովեկի մէջ՝ Առուսատանէն ետքը առաջին ընդարձակ աշխարհն է՝ թէպէտ և բնակչաց թիւը հազիւ 5 միլիոնի կը հասնի , երկու գլխաւոր ցեղ կամ ժողովուրդ բաժնուած , որք են Ծ ուետը և Արովեկիացիք . առաջինը 3,600,000 ոգիք , իսկ երկրորդը 1,400,000 : Ծ ուետքը ընդհանրապէս բարձրահասակ ու բարեկազմ են մարմնով , քաջարի , անկեղծ , կրօնասէր և հիւրասէր : — Բատ գինուորական աեսութեան Ծ ուետի երկիրը զարմանալի կերպով մը պաշտպանուած է ամէն կողմանէ անթիւ արշիպեղագուսներով ու ծովու մէջ բարձրացած ժայռերով , որով և նաւարկութիւնը շատ գժուարին ու վտանգաւոր է . երկրին ներսէրն ալ նմանապէս լեռնային ըլլալով շատ յարմար է պաշտպանուելու . այս բնական ամրութիւններէն զատ Արտօս ԺԲ Երգեր լճին արեւելեան ծայրերուն վրայ շինել տը-

ւած է Վարլսպորկի ամուր բերդը որ աս միայն բաւական է թշնամեաց որ և իցէ յարձակմանցը դէմ զնելու : — Ըուետի հիւսիսային կողմերը գրեթէ անքնակ է և լի յաւերժական ձիւնեղէն լեռներով, և տեղ տեղ գրեթէ 5,000 ոտնաչափ բարձրութեամբ : Լրկրին տասներորդ մասը գրաւուած է լիճերով և ձահիճներով, բայց տեղ տեղ ալ ծովուն երեսէն 2,000 ոտք բարձր է, իսկ միջին հաշուով բոլոր Ըուետ և Արուեկիա բարձր է ծովուն երեսէն 300 ոտնաչափ : — Լրկրագործութիւնը միայն Ըուետի հարաւային կողմը և Պոթնից ափանցը վրայ յառաջացած է, իսկ մնացած այն անբաւ ընդարձակութեամբ դաշտերը և գրեթէ բոլոր Արուեկիան ընդ հանրապէս աւազուտ՝ լեռնային ու ապառաժուտ ըլլալուն՝ անկարելի է մշակելը, կամ գոնէ շատ դժուարին : Արուեկիոյ հարաւային արևմտեան կողմը կ'իջնան Ականտինաւեան կամ Տօֆրինեան լերանց մեծ ու պղտի գոտիները՝ որոնք կ'երկրնան մինչև Ապուցեալ ովկիանոս . այս լերանց արևմտեան կողմերը ապառաժուտ, խրթնատեսիլ ու անհարթ են . իսկ արևելեան կողմը առջինին բոլորովին հակառակ երևոյթն ունի . այս լեռներս են ահաւասիկ որ Ըուետը Արուեկիային կը բաժնեն և բարձրութիւննին 8,000 ոտնաչափէն աւելի չէ, ու ընդհանրապէս կրանիտեայ ու կարծր քարերէ ձեացած են :

Ալմայ և բերք . — Ըուետ իր անհուն ընդարձակութեանը պատճառաւ ամէն տեղ մի և նոյն կլիման չունի . մինչև 56° աստիճան գրեթէ անպակաս են սաստիկ ու յորդ սնձրեներ՝ մառախուղ և մէգ, միով բանիւ կարգէ դուրս փոփոխական կլիմայ մըն է . իսկ 56°-ն վեր բոլորովին կը փոխուի երևոյթը և անձրւային կլիմայի մը կը յաջորդէ, խաղաղ՝ պարզ ու ցրտասառոց երկինք մը . տարւոյն գրեթէ կէսը անհալ ձիւնավ երկիրը ծածկուած է, այնպէս որ բլուրները, լճերն ու վլիճերը հարթ հաւասար կ'ըլլան . բայց երբոր կիզանող ա-

մառն յաջորդէ՝ կը հալին բոլոր ձիւները և կը սկսին երկրին բերքերը հասունալ : Դարնան և աշնան երկու ամիս միակերպ խոնաւ կ'ըլլայ և որ և իցէ ձանապարհորդութիւն կը խափանուի : Շակեռային շրջանակէն անդին արեւը միակերպ հօրիզոնին վրայ անմուտ պտը տելովը տաղտկալի ու նեղացուցիչ ջերմութիւն մը կը պատճառէ, մանսաւանդ ձահիճներու ու անտառաց շրջակայիները՝ որով և նոյն կողմի բնակիցք սաստիկ կը նեղուին մասնաւորապէս մժղան և մնայ խայթոցներէն : — Ինդհանրապէս Ըուետի բոլոր բարձրագիր երկիրները գծնդակ կլիմայ մը ունին . Արուեկիոյ արևմտեան կողմը ցրախն է և հողմուտ, միջնագաւառները բարեխաւն, և կը գտուին անտառներ և պըտղատու ծառեր . նոյն լայնութեան աստիճանին տակ՝ Արուեկիա աւելի բարեխաւն է քան զ Ըուետ, լերանց մեծամեծ գոտիներէ պաշտպանուած ըլլալուն : Դարձեալ Ըուետի և Արուեկիոյ ծովեզերքները կը գտնուին կաղամախ, կաղնի, կեռասենի և վարդ . իսկ հացի ծառը, կնձնին, ինձնորենին, տանձենին մինչև 60° բորբոք աստիճան առաջ կիրնան գալ . բայց անկէ անդին պտղեղնաց կը յաջորդէն եղեխնի և նոճոյ անտառները՝ և որչափ որ գէպ ՚ի հիւմիս յառաջենք այնչափ աւելի բնակիցքն ալ կը նուռազին . իսկ բեեռային շրջանակէն անդին ծառատունկ չըլլար : Հարաւային գաւառներէն, ինչպէս են Ը ան և Պլէքինկէն, բաւականապէս ցորեն կ'ելլէ նոյն գաւառներուն բնակչաց պիտոյիցը բաւելու չափ . բայց ուրիշ գաւառները ցորենը դուրսէն կ'առնուն : Մինչև 70° գարի և վարսակ կը բուսնի, միայն թէ շատ անգամ յունիսի մէջ հունձքի միջոցները, երկիրը յանկարծակի պաղելով ոչ սակաւ վնաս կուտայ երկրին բերքերուն, և բնակչաց յոյսը պարապ կը հանէ : Իսոնցմէ դուրս նմանապէս շատ տեղ կրնայ մշակուիլ գետնախնձոր, կանեփ, խաւարտ, վուշ, հուպլոն, ծխախոտ, և այլն, և այլն : Ինասնոց մէջէն ըստ բաւականին ա-



### Տարագ Լարռնիացոց .

ուատ են ձի , արջառ , ովխար , խող , այծ , երէ , հաւ , առատ ձուկ , այծեամն հիւսիսային կամ Ռէքն , զօրն որ գրաստուտեղ ալ կը գործածեն : Ձխաւ անտառներու մէջ կը գտուին նաև արջ , գայլ , վարազ , և էլան ըսուած գաղանը : — Հանքերու կողմանէ ունի հանքային ածուխ՝ բայց քիչ է . ընդ հակառակն կիմ և նոյն դասաւորութեան տակ գայող հանքեր առատ ու ամէն տեղ կը գտնուին : | աբօնիաէն ու Աքանիաէն կ'ելլէ աղէկ երկաթ՝ և տարին զրեթէ,

30 միլիոն հազարակրամ կը հանեն : Դարձեալ անուանի են Վալուն և Ուէռոսի պղնձահանքերը , առաջինը Շուետի մէջ ու երկրորդը՝ լորուեկիոյ . արծաթի , կապարի , անագի , ծծմբի ու ոսկւոյ հանքերն այնչափ առատ չեն : Լան գարձեալ այլ և այլ տեսակ հանքային ջրեր՝ մասնաւորապէս Շուետի մէջ , բայց զրեթէ անգործածական են : Դատու , լիճու , ջրանցք և երկաթուղիք : — Շուետի գետերուն մեծագոյն մասը Տոֆրինեան լեռներէն կը բղիքին , և

բոլորն ալ Պալթիկ ծով կը թափին . բայց ասոնցմէ դուրս կայ լիօդա գետը որ Արուեկիոյ մէջէն կը բղխէ՝ Դաշ-րա-Լվֆ անուամբ՝ և Ֆեմունտ լիձը ու Հէտրմարք գաւառը կտրելով՝ կ'եր-թայ կը մտնայ Ա էնէր լիձը՝ ուսկից լիօդա անուամբ կը թափի Հիւսիսային ծով : Բնդ՛անրապէս Շ ուետի գետեւ ըլը գժուարանաւարկելի են ստէպ ստէպ պատահած յործանքներուն և ժայռե-րուն պատճառաւ : Բայց բարեբազդա-բար բազմաթիւ ու յարմարագիր լիձերը գետոց պակասութիւնը կը լեցընեն, ո-րով և ներքին վաճառականութիւնը հաւասարապէս բանուկ ու գործունեայ է . այս լիձերուն մէջ ամենէն մեծն ու նշանաւորը Ա էնէր լիձն է : — Լ ճերու վրայ աւելցնելու է նաև մեծագործ շնութեամբ շատ մը ջրանցքներ՝ որոնց վրայ տէրութիւնը ամէն ժամանակ շատ մեծ ինսամբ տարած է : ( Ճրինակի հա-մար Դրուշեդգայ ջրանցքը՝ որ 14 մե-ծամեծ ժայռերու փորուածքի մէջէն անցնելով Հիւսիսային ծովը Պալթիկի հետ կը միացընէ՝ որ անմիջապէս Շ ուե-տի միջնաշխարհէն կ'անցնի : Եշանաւոր են դարձեալ այս ջրանցքները, Ա էտ-տէ, Ի քերս, Ա զրէօմնհոլմ, Վարլըս-դատ, Ա կոտէրդէլձ, և այլն : — Եր-կաթուղեաց գործածութիւնը թէպէտ գեռ սկսած չէ Շ ուետի մէջ՝ բայց շի-նուելու վրայ են, և պիտի երթան Ա դոքհոլմէն մինչեւ լիօդըպորկ, դար-ձեալ Ա դոքհոլմէն մինչեւ Խաղատ և յա-դատէ մինչեւ ՚ի Ա ալմէօ :

Վաղաքական բաժանմամբ Շ ուետ 3 գլխաւոր նահանգ և 24 փոքր գաւառ կը բաժնուի, որոնց իւրաքանչիւրը զըլ-խաւոր քաղաքին անուամբը կը կո-չուին և առանձին կուսականներով կը կառավարուին : Խսկ Ա, որուեկիա 17 գաւառ կը բաժնուի : Եշրոպայէն դուրս Շ ուետը մէկ կուսակալութիւն մը միայն ունին և է Ա նդիլեանց մէջէն Ա . Բար-թուղիմէոս կղզին :

Հաստ և էլուծուագ . — Տէրութեան տարեկան մուտքը 14,358,300 դալէու է, ( 30,583,000 ֆր . մէկ դալէու հա-

ւասար է 2 ֆր . 13 հարիւրորդ ) իսկ ելքը 12,876,920 դալէու ( 27,428,000 ֆր . ), պարտքը 1858ին էր 29,753,000 դալէու ( 63,374,000 ֆր . ) :

Ա արշա-նե-իւն . — Շ ուետի թագաւ-որական գահուն իրաւունքը որդւոց որդի կ'երթայ՝ և ընտանեաց մէջէն ան-դրանիկը կը ժառանգէ . կանայք ոչ եր-բէք կրնան թագաւորել : ( Ժագաւորը ըստ որոշման Ա իւնհոդոսին Ա ւրսալայի՝ որ գումարուեցաւ 1593ին, պէտք է Ա ւետարականաց աղանդէն ըլլայ՝ ինչպէս նաև բնակչաց կրօնքն ալ Լ ուտերական է : « Վաղաքական գործոց մէջ թագաւ-որը պատասխանատու չէ՝ որովհետեւ Հասնից ժողովքին որոշմամբը կ'ըլլայ ամէն բան՝ թէպէտ և որոշմանց հրա-տարակումը թագաւորին հաջութեամ-բը պէտք է որ կատարուի : Ա յս տաս-նից ժողովքին անդամներն են՝ Պատե-րազմի, Օսմալյին զինուորութեն, Ա, եր-քին գործոց, Ա լումուտից, Ա րօնից պաշ-տօնեայները, իսկ մնացած անդամները պարզ խորհրդական են առանց մաս-նաւոր պաշտօնի : Լայ դարձեալ ու-րիշ ժողովք մ'ալ Ա րկոտասանից ա-նուամբ՝ որոնց ընտրութիւնը թագաւ-որէն կախումն ունի՝ և են իբր խոր-հըրդականք աղքայի : Ա յս ժողովքիս մէջ թագաւորը երկու քուէ ունի և կրնայ որ և իցէ որոշմանց միջոց ներկայ ըլլալ : ( Ժագաւառանդը երբոր 18 տա-րին լմնացընէ՝ կրնայ ամենայն իշխանու-թիւն բանեցընել առանց իր խնամա-կալուին խորհրդովը շարժելու՝ և իր տարեկան եկամուտն է 1,661,400 ֆր . — Ա զգային խորհրդարանին անդամնե-րը ժողովրդեան չորս տեսակ գասէն կը բաղկանան, այսինքն յազնուականաց, յեկեղեցականաց, ՚ի ռամիկ մարդկանց և ՚ի գեղացոց : Ա զնուականութեան ա-ռանձնաշնորհութիւնը թէպէտ ՚ Ա ր-րուեկից մէջ խափանած է Շ ուետի հետ միանալէն վերջը՝ բայց դեռ Շ ուե-տի մէջ կը տեւէ, և են ընդ ամէնը 1,270 ընտանիք, որոնցմէ 283 լ լոմի ու Պարմնի պատուանուններն ունին, և իւրաքանչիւր ընտանեաց գլուխը, թէ-

արու ըլլայ և թէ էգ , իրաւունք ունի ազնուականաց ժողովքին մէջ քուեարկութեան , միայն թէ 25 տարին անցած պէտք է որ ըլլայ . իսկ 21 տարուան եղածը կրնայ ժողովքին ներկայ գտնուիլ՝ բայց առանց քուեարկութե իրաւունք ունենալու : Այսպաւորը զովոր ուղղէ կրնայ ազնուականութեան աստիճան հանել : Իսկ եկեղեցականք՝ ինչպէս են ժողովրդապետներն՝ անոնց օգնականները են , ընդհանուր ազգային ժողովքով կ'ընտրուին՝ որոնց նոյն թեմին եպիսկոպոսը երեք հոգի կ'առաջարկէ : Այսպաւոր այս կերպով ընտրուելուն վերջը՝ իրենց մէջ անկախ ժողովք մը կը գումարեն ու մէջերնէն մէկ հոգի Երեսփոխան կը խաւրեն մեծագոյն ժողովին : Ըուետի մէջ նախաթու մետրապոլիտը Աւբսալյի արքեպիսկոպոսուն է՝ և է գլուխ ըստ վարդապետութեան մասին և բարեկարգութեանց , և որ և է հաւատոց խնդիրներինքը կ'որոշէ , միաբան հաւանութեամբ տասը բարձրագոյն եպիսկոպոսաց՝ զորնք կղերը կ'ընտրէ . Իսկ Աւբեան կղերի ըստածը կը կազմուի 12 եպիսկոպոսներէ , 44 ժողովրդապետներէ , 13 նուիրակներէ , Աւմանց Ճեմարանին 2 անդամներէն , և ժողովքին նախագահ կը նստի Աւբսալյի ալքեպիսկոպոսը :

Այժմ : — Ըուետք , ինչպէս վերը ըստնք , մեծաւ մասամբ լուտերականք են ու մաս մ'ալ աւետարանական : Ամբողջ Ըուետի մէջ մէկ արքեպիսկոպոսական աթոռ կայ , որ է Աւբսալյինը , 12 եպիսկոպոսական , և 3,500 ստորին կարգի եկեղեցականք : Այս եպիսկոպոսները անուամբ միայն հօտապետ են՝ և բանի մը չեն խառնուիր և իրենց տեղ ժողովրդապետաց յանձնուած է ժողովրդեան հոգն ու խնամքը . սակայն իրենց տարեկան եկամուտը լիովին կ'առնեն տէրութենէն : Իսկ քահանայից՝ տէրութենէն կապուած եկամուտը ոչինչ բան է , և ժողովրդեան տրովքը իրենց ապրուստը կը ճարեն : — Աւբսալյի արքեպիսկոպոսին ընտրութիւնը շատ հանդիսաւոր կերպով կ'ըլ-

լայ . բոլոր տէրութեան մէջ եղած եպիսկոպոսունք , ժողովրդապետով և պատուաւոր քահանայք արքեպիսկոպոսանիստ քաղաքը ժողովելով՝ միաձայն հաւանութեամբ կ'ընտրեն վերոյիշեալ երկոտասան եպիսկոպոսներէն մէկը : Ըուետի մէջ կրօնքը գրեթէ տեսակ մը աշխարհական իշխանութիւն դարձած է , պատճառաւ որ ամեննեխն տարբերութիւն մը չկայ եկեղեցական ու աշխարհական իշխանութեանց մէջ :

Երբարութեան իրեք գլխաւոր ատեան կայ , ՚ի Աղոքհոլմ , Անգեօբինկ , և Վրիստիանցդատ : — Երկու գլխաւոր մեծ համալսարան կայ՝ մէկը յիւթսալա ու միւսը ՚ի Աւնտ , իսկ երկրորդական մարզատուններ բաւականապէս յաճախած են :

Օ խոռորութիւն ցամացի և ծռչու : — Ըուետի ընդարձակ տէրութիւնը 7,000 միայն թոշակաւոր զինուոր ունի , ՚ի բաց առեալ 26,000 մը որոնք ազգային զինուոր կը կոչուին ու խաղաղութեան միջոց ազատ են զինուորութենէ : Իայց պատերազմի ատեն տէրութիւնը կը նայ ինչուան 120,000 հոգւոյ բանակ կազմել : Այս պատերազմի զինուորները տարին մէկ ամիս մը միայն զինուորական կրթութիւն կ'ընեն , իսկ ուրիշ միջոց մասնաւոր պարտականութիւն չունին : Այլոր քաղաքացիք պատերազմի միջոց պարտական են տէրութեան ծառայելու 5 տարի . իսկ բուն թոշակաւոր զինուորները 6 տարի : Չորս ամուր ու զօրանիստ քաղաք կայ Ըուետի մէջ , և են Վրիստիանցդատ , Վառլազգրունա , ՚այ-Լաֆէսպորկ և Աղոքհոլմ : Իարձեալ կան քանի մը զինուորական դրաբանցներ որոնց մէջ նշանաւոր է Վարլազպէրկինը :

1857 թէ Ըուետի տէրութիւնը ունէր 10 առաջին կարգի կամ եռայարկ նաւ , 6 կրկնայարկ , 25 միայարկ , և 500 ալ մանր նաւեր , որոնց ամենուն թիւը 800 է՝ անցնի : Այս տօրմիղը երկու մաս կը բաժնուի՝ մեծ ու փոքր առբմիջ անուամբ , որ առանձին ծովականերու հրամանացը ներքեւ են . սա-

կայն ընդհանուրին հրամանատարութիւնը թագաւորական ցեղին վերապահեալ է : Պալսաւոր նաւարաններն են՝ ի Ադրբէյզոլմ, Պարլսգրոնա, Լոդէմալուրկ : Խակ Վարլսպէրկի մէջ կայ վարժարան մը հրազինուց և զինուրական արուեստի :

**Դաշտարութիւն :** — Խւրոպիոյ յառաջադէմ տէրութիւններէն մէկը կը լունայ սեպուիլ Շուէտ ճարտարութեան և արուեստից կողմանէ, և մօտ տարիներա շատ ջանք կ'ըլլուի արուեստները ծաղկեցրնելու . մետաքսեղէն ու բամբակեղէն հիւսուածքները երթալով կը կատարելագործուին, երկաթեղէն գործուածքներն ալ շատ կատարելագործութեան հասած են . 1850<sup>ին</sup> երկաթեղէնի գործատուններուն թիւը 2, 513<sup>ի</sup> կը հասնէր . ասկէ կը նայ մակաբերուիլ նաև ուրիշ արուեստից գործատուններուն թիւը : 1850<sup>ին</sup> Շուէտէն ելած ապրանքը 24,505,000 ֆր . հասերէր, իսկ ներս մոտածները 23,987,000 ֆր . — Շուէտի ձեռակերտից մէջ յիշատակութեան արժանի են չորեշարժ մեքենաներու գործուածքը՝ որ թէպէտ Ինգլիոյ գործուածներուն շհասնին՝ բայց անոնցմէ շատ վար չեն մնար : — Շուէտ 1855<sup>ին</sup> հին շափուց ու կշռոց դրութիւնը խափանելով՝ գաղղիական կամ տամնորդական դրութիւնը հաստատեց :

**Ինդհանուր ուսութիւն :** — Կորվեկիատենօք զատ թագաւորութիւն էր՝ ու Շուէտի սխերիմ թշնամի, բայց 1814<sup>ի</sup> դաշնադրութքը Շուէտի հետ միացաւ, ու ըստեցաւ միացեալ թագաւորութիւն՝ Կորվեկիոյ և Շուէտաց : Վայ երկու թագաւորութիւններս տարբեր սահմանադրութեամբ և օրինօք կը կառավարուին թէպէտ և թագաւորը մէկ է և զինաւոր որոշմունքները երկու ազգաց միաձայն հաւանութեամբը՝ ի գործ կը դրուին : Տէրութեալ վարչութիւնը սահմանադրական միսապետութիւն է, ու Կորվեկիա ներքին գործոց համար առանձին խորհրդանոց ունի : —

Շուէտի ժողովուրդը երկու զանա-

զան ազգերէ կը բաղկանայ, որոնց հետ խառնուած է նաև Պարմանական սերունդը : Վայ երկու ժողովուրդներն են Շուէտք և Կորվեկիացիք որոնց անուամբը կը կոչուի տէրութիւնն ալ : կը գտնուին նաև խել մը Ինգլիացիք որոնք երկու աշխարհքին մէջ ալ յըրուած են, ու ազգախառնութեամբ բնիկ տեղացոց հետ միացած : Բայց պէտք է զանազաննել Վինլանտեան ցեղը որ թէպէտ քիչուոր են թուով, բայց սովորութեամբ ու լեզուով բոլորովին կը տարբերին և են ընդ ամէնը իբր 2,000 :

**Խակ Լաբոնիացիք** որ աւելի բազմաթիւ են՝ Շուէտի հիւսիսային ծայրերը վրաններով սառուցեալ դաշտերու վրայ կը բնակին՝ մղոններով հեռու մէկմէկէ և տարբեր ազգութիւնն մը կը կազմեն : Վայ ժողովրդեանս բարքն ու սովորութիւնները շատ հետաքրքրական են . բայց որովհետեւ ուրիշ անգամ Բազմավիպիս մէջ խօսած ենք իրենց վրայ, այն պատճառաւ հօն կը հրաւիրենք զբնթերցողս : — Կորվեկիոյ մէջ Նորի ամեննեին չկայ, իսկ Շուէտի մէջ քանի մը հարիւրի չափ կան :

Շուէտք իրենց քաջութեամբն և քանի մը տեսակ ուսմանց մէջ յառաջադէմ գտնուելնուն պատճառաւ՝ ատենօք շատ մեծ անուն հանած էին Խւրոպայի մէջ . և իրենց պատմութիւնը, որ մետասաններորդ դարէն կը սկսի՝ և է իրենց քրիստոնէական հաւատքը ընդունելու միջոցը, կը պարծին քանի մը աշխարհաքարոզ թագաւորաց անուամբը որոնց երեւելի երեւելի գործքերը և փառաւոր յաղթանակները Խւրոպիոյ դիմաց յարգելի ըրին իրենց ժողովուրդը և փառքը և ևս աւելցույցին : Կանապէս գիտութեանց ասպարէզին մէջ կը պարծին Շուէտք խել մը մեծահանձար մարդկանց վրայ՝ ինչպէս են Ծիբոյ Պրահէ, Յանովալտսէն, և Լիննէոս անուանի բնապատումը, ու Բերգելիոս աշխարհաքարոզ բնալոյնը, որոնց անունը մեծարոյ է բոլոր ազանց առջեւ :

